ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Դեկտեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանն այցելեցին Եղեգնաձոր, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ բացվեց ուսուցիչների վերապատրաստման Վայոց Ձորի կենտրոնը:

Վեհափառ Հայրապետն ու ՀՀ վարչապետը մի պահ կանգ առան քաղաքի Ս. Աստվածածին հնամենի եկեղեցում, ուր հնչեց աղոթք առ Աստված: Ապա Նորին Սրբությունը և Արամ Սարգսյանն ուղղվեցին եկեղեցու հարևանությամբ գտնվող նորաբաց կենտրոն:

Ուսուցիչների վերապատրաստման Վայոց Ձորի կենտրոնը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սյունյաց թեմի և ՀՀ կրթության և գիտության նախարարության համատեղ ծրագրի արդյունք է: Ըստ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված եռամյա ծրագրի, Հայաստանի մարզերում իր տեսակի մեջ առաջինը դարձած այս կենտրոնում 12 առարկաների գծով վերապատրաստման կուրսեր կանցնեն մարզի բոլոր դպրոցների ուսուցիչները: Ծրագրի ծախսերը հոգում է Հայ Եկեղեցին, որի համար գումարներ է տրամադրելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանին նվիրված «Կլոր Սեղանը»: Ուսուցիչների վերապատրաստման գործին աջակցելուց կատ, Սյունյաց թեմի հովանավորությամբ նորաստեղծ կենտրոնում գործելու է նաև բարեգործական ճաշարան, իրականացվելու են սոցիալական այլ ծրագրեր: Նշենք, որ շենքի վերանորոգման աշխատանքները նույնպես իրականացվել են Սյունյաց թեմի հովանավորությամբ՝ բարերարներ Փոստաջյանի, Բարբարա Լորենսի, Թյուֆենքյանի և Ճիրվանյանի նվիրատվություններով:

«Ուսուցանում է որդուն, նախանձն է շարժում թշնամու և հպարտանում նրա պատգամին, Նորին Սրբությունը փաստեց, որ կրթության և ուսման ձգտումն է հայ ժողովրդի լինելիության, հարատևության և հավերժության գաղտնիքը: Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու մաղթանքը հղեց ներկաներին՝ ավելացնելով, որ անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել, կերտել հայորդյայ

մեջ հայրենասիրության, հայրենապաշտության, հավատքի ոգին՝ ի շահ հայ ժողովրդի բարօր կյանքի և հավերժության:

Կենտրոնի բացման առիթով իր ուրախությունը եղեգնաձորցիների հետ կիսեց նաև վարչապետ Արամ Սարգսյանը:

«Աղոթենք առ Աստված, որ հռչակավոր Գլաձորի ավանդույթները մի նոր ուղղություն ստանան այս կենտրոնում»,- գրչին ու գրչությանը դարավոր արմատներով կապված Սյունյաց ժողովրդին իր մաղթանքը հղեց Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը:

Երախտագիտության և շնորհավորանքի խոսք ասացին նաև Վայոց Ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանը, մարզի ուսուցիչները:

Ապա հատվեց կարմիր ժապավենը:

Ինչպես նշեց Վեհափառ Հայրապետը, Եկեղեցու և պետության համագործակցությամբ կյանքի կոչված առաջին այս ծրագիրը կունենա իր շարունակությունը: Ըստ Վեհափառ Հայրապետի, համանման կենտրոններ կհիմնվեն նաև Հայաստանի 6 այլ մարզերում:

Կենտրոնի հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանը, կրթության և գիտության նախարար Էդուարդ Ղազարյանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ